

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պրակտարանը բարու յեւկըների միացե՞լ!

831.335

15-64

ՀԱԿ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

գ. ՄԵՍՅԱՆ

Խ Ր Ճ Ի Թ Ո Ւ Ւ



ՊԱՏԱՆՅԱՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍ—1926

2011-07

891.995

ՊՐԵԼԵՎՈՒՄ ԱՆ ԽԵՂԱՆԵՐԻ ԱԲԱԳԵՐ!

Հ-64

ՓՈՔՐԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

գ. ՄԵՍՅԱՆ


891.54-32



Խ Ր Ճ Ի Թ Ո Ւ Ւ

ՊԱՏՄՎԱԾՔ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ



ԹԻՖԼԻՍ - 1926

16. 2013

11229

Խ Ր Ճ Ի Թ Ո Ւ Մ

Զմեռվա իրիկուն եր: Բուխարու մեջ աղմուկով վովում ու ճարճատում եր թեժ կրակը — ասես թե թոնիր եր վառվում: Բոցը վոստոստում եր ու վազում փայտերն ի վեր, նրա հետ ել խրճիթի ներսը—թարեքին, պատերին, սյուներին վոստոստում եյին ստվերները վեր ու վար... Այդ մեծ լույսի տակ լուսավորվել եր խըրճիթը ու մոռացվել մըստ ճրագի լույսը, վորի ստվերը յերերում եր կողքի պատին...

Բուխարու առաջ, յերեսները գեպի կրակը, իրար կողքի նստած են մի մի կոճղի վրա հայր ու վորդի—Աղալոն ու փոքրիկ Սումբաթը:

Յերկուսն ել լուրջ ու խոհուն, զբաղված են միեննույն գործով. Սումբաթը՝ քիչ առաջ ապրանքն եր հանդից բերել, տեղափորել ու հիմա յեր նրա ազատ ժամանակը, իսկ Աղալոն՝ նոր եր վերադարձել գրագիտության դպրոցից: Յերկուսն ել եզս որվա դասերն եյին սերտում:

Յեթե մեկը լիներ, վոր նայեր գրանց յերկուսի դեմքին՝ կնկատեր, վոր Սումբաթի համար հաճույք եր այդ աշխատանքը. նրա դեմքին ժպիտը խաղում եր ու մեկ մեկ ել հպարտությամբ նայում եր հոր ու մոր կողմը, վոր տեսնի,



Կ 2879-63
Գրատեղվար № 1422.

Տիրամ 2000.

ԹԵՂԻՒԻ, Ժ.Տ.Գ.Խ. Պոլիգրաֆտրեսոնի 4-րդ տակ, Պուշկ. փող, № 3.

թե նրանք լսում են իրան, վոր ինքն ենպես վարժ
կարդում ե, թե, չե: Են ինչ Աղալոն եր՝ յերե-
վում եր, վոր դժար տեղն ե. դեմքի կնծիռները
անվերջ մոտենում ու հեռանում եյին իրարից,
խոսքերն ել ասելու ժամանակ՝ ավելի յեր կռա-
նում դեպի գիրքը ու յետ քաշվում, բայց հըն-
չյունները դժվար եյին դուրս գալիս ներսից:
...«Փշել ենք կապանքը դարավոր
Ու տեր ենք մեր ազատ նոր կյանքին»...

Կարդում եր վարժ ու բարձր ձայնով Սում-
բաթը:

— ...«Ու, ու, ուն»... յերկարացնում եր
Աղալոն, բայց դրանից հետո չեր կարում վրա
բերի, հիշի, թե են յերկու մատնանի ցցված գիրը
ինչ ե. իսկ եղ ընթացքում Սումբաթը ասես
ձիավոր լիներ, յետեկց քշած գալիս, իրան տա-
լիս անց եր կենում.


...«Մեր շարքերն են դիմում ամեն որ՝
Հագարներ չորս կողմից աշխարհի»:

Թեև չեր նախանձում Աղալոն, վորիրա Սում-
բաթը եղան լավ ե կարդում, բայց ելի մի ան-
հարմարություն եր զգում իրան մեջ, վոր յետ
եր մնում ինքը ու, առանց մյուս տառերը ջո-
կելու՝ մատը արագությամբ շարժում եր ինքնա-
բերաբար են սկսած տողի ամբողջ յերկարու-
թյամբ, վորի բովանդակությունը միտն եր մը-
նացել.

...«ու-սումբը ուժ ե, ու-սումբը ուժ ե»:
Այդ միջոցին նորից լսվում եր նրա կողքից
Սումբաթի համարձակ ձայնը.

...«Կքանդենք մենք հինը, վոր շինենք
Նոր աշխարհ, նոր ուժով միասին»...

Աղալոն հետ եր դառնում եղ նույն տեղի
սկիզբը ու նորից կոխ բռնում «ու»-ի հետ.
— «Ու, ու, ուն»...



...«Ու եղ նոր աշխարհին կտիրենք—
Քաղաքում՝ բանվորը, գյուղերում՝ գյուղացին»...
Վերջացնում եր Սումբաթը:

— Սումբաթ ջան, ես ասոն ի՞նչ կասվի,
մտիցս ընկավ:

— Վորը, ապի.—մոտենում ե Սմբաթը ու
մի կերպ տեղահան անելով հոր սեղմված՝ մա-
տը, վորի տակ կորել եր ամբողջ բառը ու մի-
անգամից կարդում.

— Ես, ապի, «ուսումը ուժ ե»:

— Աղա, ծիծաղում եր Աղալոն, եղ հո, յես
ել զիտեմ, վոր բոլորն իրար հետ կասվի «ու-
սումն ուժ ե». դու ես ասա, այ, ես յերկու
«ու»-ի արանքինը, ես, վոր հենց ե կոթը կոո-
րած յեղան ըլի, մատները ցցած:

— Հա, եղ «ս» ա, ապի.

— Վուրեմն «ու-սը-ու...». բա ես շերեփի
նման կոթը կենան ինչ ա.

— Եղ ել «մ» ա, «ուսում».

— Հա, հմի գլխի ընկա. «ու-սը-ու-մը», ու-
սումն. ես եր «ու»... բա ես մինը, վոր խոզի
պոչի պես հետ ա ծալված:

— Եղ ծալվածը՝ «ժ» ա.

— ...«ու-ժը» ե, ուժ ե», վերջացրեց Աղա-
լոն:

— Հա, եղպես ե, ապի ուսումը ուժ ե:

Նորից ամեն մեկը բռնեց իր տեղը ու ա-
մեն մեկը խորասուզվեց իր աշխատանքի մեջ—
մինը հեշտ ու արագ, մյուսը՝ ծանր ու բարակ,
բայց համառ կամքով:

Բուխարու կրակը առաջվա նման թեժ եր,

վորի միապաղաղ վովոսցը սղոցվում եր Աղա-
լոյի կոկորդային հնչունների յերկարացումով
— «ու-ու-ու»...

— Հերիք ա, Սումբաթ ջան, վեր, տեղդ
մտի, մնացածն ել եգուց կկարդաս:

Այ մարդ, դու ել պառկի, մի քիչ աչքդ
կպցրու, վոր, ալիր չունենք, ես ա աքլարը կան-
չի ջաղաց պտի զնվա, —խոսեց Նաթելը, Աղա-
լոյի կինը, վոր կամ փետ եր ավելացնում բու-
խարու կրակին, կամ մենակ մոլորված ննջում
եր առանց զրուցակցի—որվա հոգնածությունից
— կողքի պատին հենված:

— Կնիկարմատի աղջիկ, մինն ասի, թե դու
ինչի յես քունդ կորցնում, տեղդ մտի, քնի,
ելի. քու դասդ ել հո չի մնացել...

— Հա, դե վոր դու դաս ես առնում, ենա
ինձ ել ա բոր, քեզ ել, ելի—պատասխանեց Նա-
թելը, մարդու նկատողությունից անբավական:

— Դե, ես ա, կտենաս դու, ա կնիկ, թե
մի տասն որից հետո ջրի պես կարգալու չեմ
քո ջպու:

— Իի, ա մարդ, երնակ ձեր վարժապե-
տին, վոր քեզ նմանների համար զլուխ ունի.
դու նոր եղ հասակումը գիր պտես սովորի, վոր
բանի պետք զա:

— Ինչի յես ասում, ա կնիկ, ոխնվի սրա
կառավարությունն ել, ըսհենց ժամանակն ել.
աշխարքս տենում չես, վոր լուսավորվել ա-

մեզ ել են ուղում լուսավորեցնեն: Նշանած տարիս, աշունքը, տեր-Ապրհամին ասի, ի՞նչ տամ, տերտեր, մի ձեռք քաշիլ սովորացնես իմ անումը. թե՛ մի որավար սերմած ցել. վոչ կարացի ցելը տամ, վոչ ել թե՛ սովորեցի: Հիմի հո փողերը վեր չենք համբարում. ասում են գործից պարապ վախտը յեկեք ձեզ համար գիր սովորեցեք, վոր կարդաք, աշխարհի լավն ու վատը իմանաք: Հենց ես իմանում, թե զու չպահս սովորի, Նաթել: Են առաջ եր, վոր ասում ինձ գիրն ու ուսումը մեզ համար չի. մին հիմա ել հարցրու մեր վարժապետին, տես ինչեր ա ասում. ասում ա, հրամայված ա, վոր երկու տարուց հետո, ել անզիր մարդ չպիտի ըլի ես սաղ, մեր Ռուսեթա աշխարքումը, բաս... Սհենց չի, Սումբաթ ջան:

— Հա, ապի, Լենինն ա ասել, վոր մինչև 1927 թիվը բոլորը պետք ա գրագետ դառնան:

— Իմացար, Նաթել:

— Իմացա, ամմա, հրետ, զրա ժամանակն ա, թող գա կարդա, վոր դեպի լուսն ա գնում: Զանին մատաղ, տեսնում ես, վհնց ա զամշի տալիս, ասես քոհլան ձի ըլի տակին, գալիս առաջդ ընկնում, քեզ թողնում յետեկցը լընդլընգալիս: Դու նոր եղ հասակումը «այր, բեն» ես սովորում, ի՞նչ անես. սովորող եյիր, զրա չափ վախտը կսովորեյիր:

— Սրա չափ վախտը, հը, հը... քմծի-

ծաղեց Աղալոն. են վախտը գնա, վաչ յետ գա:
— Ապի, ըդորթ ինչի պուճուր վախտդ չես սովորել, վոր հեշտ ըլեր:

— Բալա ջան, զու մի դեռ արի շանց տու ես, դասս սովորեմ՝ հետո կպատմեմ եդ մասին: Ես ել սրանից չի, Սումբաթ ջան:

— Հա, ապի, ել են տառերն են «ու-ու» ունես, ուժ ունես»:

— «Ուսում ունես, ուժ ունես»—ինքն ել կրկնեց աղի հետեկց, մատը տանելով աղի յերկարությամբ:

— Տեսնում ես, Նաթել, թեքեց գլուխը Աղալոն դեպի կինը, ասում ա «ուսում ունես, ուժ ունես»: Բա սուտ ա ասում. յես մինչև որս ինչի յիպետք. յա անուսում մարգը, յա՝ անասունքը...

— Հմի, ետ ա զու ուսումնական դառնար—նկատեց Նաթելը: Նրանց հայացքները իրար հանգիպեց ու յերկուսն ել ծիծաղեցին:

— Բա չդառնա... Միտ ա հո, Նաթել, Կափունց Ոսեփի բարաթը, վոր 20 մանեթը, 20 թուման եր դառել թղթի միջին. աչքից արտասունքը թող անելով, իսեղի յեզներն ու կովերը խլեց, ծախել տվավ մովրով Արշակը որը ցերեկով. սաղ գեղը գիտեր, վոր նհախ տեղն ա, նա նրան պարտ չեր, ամմա գե վոր նրա տեղը ձեռք քաշած եր... Դե, հմի սհենց ասենք. վոր Ոսեփը մի ձեռք քաշել իմանար, մովրով Արշակն եւ հարյուր ենտեսակ մովրով ըլեր, կարան Ոսեփից

մի մազ տաներ նհախ։ Հիմի քեզ եմ հարցնում,
Նաթել, կարա մինը ինձ վրա մի սուտ բարաթ
սարքի, թե մի կապեկ պարտ ես, վոր իմ ձեռքը
ըլլի միջին։

— Դե, հալրաթ վոր գիրը լավ բան ա, բա
նոր ես գիդում, ա մարդ...

Քիչ հետո ընթերցանությունը նորից իր
ճամբան ընկափ։ Նաթելլ նորից սկսեց մենակու-
թյունից նստած տեղը որորվել, ննջալ։ Սում-
բաթն իր վոտանավորն եր անգիր անում, իսկ
Աղալոն հաղթել եր են միքանի տառերին ու
վարժ կրկնում եր յերկու տողը։ Նա շարունակ
ովնության եր կանչում Սումբաթին ու ամեն
մի նոր տառի ընտելանալիս՝ վոնց վոր թե թըշ-
նամուց մի նոր գիրք եր խլում։ զվարթացած՝
են հասակավոր մարդը, հազարով, կոկորդը մար-
դելով, բեղերը շինով կարդում եր, յետ դառ-
նում, նորից կարդում, նորից ասում։

— Ես ի՞նչ ա, Սումբաթ ջան, ես դամշու
նմանը։

— Եդ՝ «լ» ա, ապի։

— Լա՛վ, թող «լը» ըլի, վուրեմն, ես ել կլի՝
«ու-սր-ու-մը-ը լը-ու-սը ե, ուսումը լուս ե»։
Այ բերանդ ապրի քու, ասով այ թե ասել ա
հա՛ա՛, բա լուս չի... Մերդ տնազ ա անում,
Սումբաթ ջան, ասում ա, վոր սովորողի, ինչի
քեզ չափ վախտը չի սովորում։ Իմ քեզ չափ
վախտը բա, ժամանակը ես տեսակ ժամանակ

եր։ Դու ետ ա տաննըյերեք տարեկան ես նո, քե-
զանից ել մի տարով փոքր կլեյի գեռ, վոր հերս
ել մեռավ, մնացի յեթիմ։ Անտոն հորողբերս պտեր
ինձ շկոլ տան։ Նա իրան մոտ ել չպահեց։ «կե-
նում ա, ի՞նչ անի, ասում եր, երկու որավար
հող ունենք երկու աղբօրով։ մեծանա, մինն ել
սա պտի առնի ձեռիցա, թող գնա, մի տեղ իրա
համար ապրուստ գտնի, հեռանա ես գեղիցը».
ու տարափ նորար տվավ ինձ։ Յեվ ել դրուստ
վոր, մենք են վախտը երկու որավար հող ան-
ջաղ ունեյինք—մինը կոլոր տափն եր, մինն ել
Զորի են զոլինը—մնացածը նոր տվին թափադ-
ների հողերիցը։ Մի քանի տարի սրա նրա մոտ
կենալուց հետո՝ ընկա Վասիլ աղի մոտ։ Վասիլ
աղի տունը, են տունն ա յե, Սումբաթ, վոր հմի
մեծ շկոլ ա, իրա բաղերովը, կովի զավողովը։

— Հա, լսում եր ուշագիր Սումբաթը։

— Վասիլ աղան ել, գե են վախտը մի Վա-
սիլ աղա յեր, թրի առաջն ել եր կտրում, քա-
մակն ել. նրանից առաջ մարդ չկար մեր սահ-
մանումը։ Իրեք տղա ուներ, իրեքն ել կարգում
ին։ Զմեռը գնում ին քաղաք իրանց գործին,
ամառը զալիս ըստեղ, զաչ։ Պուճուր տղի անումը
Սերոժ եր, իմ հասակին, իրաք հետ ել լավ ինք։
Մի անգամ ինը բեցի, ասեցի, ի՞նչ կի, վոր ինձ
համար մի թղթի վրա գրես «այս, բենը», սովո-
րեմ։ Ասեց, լավ կի։ Մի որ ել հետը բալկոնով
անցկենալիս, ձեռքիս թուղթը հերը տեսավ.

— Աղա, եղ ի՞նչ ա, ասավ, Աղալու:
— «Այը, բեն», ասի, աղա. ուզում եմ Սերոժիցը սովորեմ:

— Վհնց թե, ասավ, աչքերին հուպ տալով:
Տն, հարամզագա, ասավ, հալա ես մին, վոր նա
քեզ համար Ենրոժ չի—Ենրյոժ աղա յա. մին ել,
վոր՝ յես քեզ եստեղ ինչի՞ համար եմ բերել...
Չեռքիցս առավ թուղթը, վոտները տափը թա-
կեց տղի վրա, թե՝


— Սերյոժա, ինչի՞ յես խարաբ անում, ե-
րես տալիս, ես շան լակոտին...

Հետո մոտենալով ինձ, անգաճիցս բանեց,
քաշեց, մոտեցրեց բակոնի մուհաջարին ու մա-
տը մեկնեց զեպի ներքեւ.

— Են ի՞նչ ա, ասավ, Աղալու:
— Գոմեշ ա, ասի, աղա, թելլուն:
— Են ի՞նչ ա, ասավ:
— Են ել, Խնձորը, յեղը:
— Ե՞ն:
— Են ել, եշն ա:
— Գոմեշն ինչի՞ համար ա:
— Սելի զլիսին լծում ենք, խուրձ բերում,
աղա, ասի:
— Յեղը վորտեղ են լծում:
— Հորիքումն, ասի:
— Լա՛վ, են հեյվանը:
— Նրան ել կժերը վրան ենք զցում, տա-
նում, ջուր բերում:

— Են չարդախի տակի կապածն ել հո գի-
տես, վոր վասիլ աղի ձին ա, ուրիշը չի նստում:
— Գիտամ, ասի.

— Դե վոր գիտաս, լավ միտդ պահի, այ
վորդի, ասաց. պուճուր ես, նրա համար եմ
սհենց խոսում հետդ, թե չե ուրիշ տեսակ կխո-



սեյի: Տեսնում ես, վոր նրանք բոլորը անա-
սուններ են, ամմա նրանցից ամեն մինը իրա
տեղն ու պատիվս ունի. վոչ եշը կլծենք, վոչ
թե գոմեշը բարձենք. գարին քոհան ձիուն ենք
տալիս ու կապում չարդախի շվաքումը, ձիպո-
տը եշի վրա կոտրատում ենք, թե վոր գունչը

մեկնի դեպի խոտի դեզը։ Մարդիկն ել եղ հեյ-
վանների որինակին են—տեսակ, տեսակ. այ,
դու են եցն ես, բալա ջան, մեր Սերյոժը՝
են ձին. նրա ախոռը ջոկ ա, քոնը ջոկ. նա
պետք ա ժամանակով ինձ նման Սերյոժ աղա
դառնա, Սերգեյ Վասիլիչ, ափիցեր, պրիստավ, յա
նաշախիկ ըլի, են ինչ ա դու՝ մին մուժիկ մին
գյաղա, նորար մնաս. Համկացար. դե գնա, ա-
սաց, ես ել նրա համար եմ եսպես անում, վոր
սիրում եմ քեզ, ուզում եմ, խրատս միտդ պա-
հես, տեղդ ճանաչես, մարդ զառնաս ու շնոր-
հակալ ըլես Վասիլ աղիցը։ Ասաց, Սումբաթ
ջան, ու ենպես հլորեց անզաճս, շպրտեց սան-
դուղըներովը, վոր ասի, անզաճս են անիրավի
ձեռքին մնաց։

Իմացար հիմի, թե ինչի պուճուր վախտս
գիր չկարացի սովորեմ։ Սիրտս վառվեց, ախ
քաշեցի իմ մեջ, ասի, ենքան մի չմեռնեմ, վոր
սրտիս մուռը հանեմ Վասիլ աղիցը։

Սումբաթը ուշադրությամբ լառմ եր հոր
պատմությունը, հուզված, հորը հասած վիրա-
փորանքի համար։

— Հետո, ապի, բա դու վոչինչ չարիր նրան,
հետո։

— Արի, վոնց չարի։ Նրանից հետովը են
եր, վոր դրանից մի քանի տարի անց, սրանից
դուզ 20 տարի առաջ, մեծ խառնակություն
ընկավ. խաբարը յեկավ, թե քաղբումը բունտ

ա, բոմբեր են գցում զազախների, ափիցերների
վրա, թե Մոսկովում մեծ կրիվ կա բանվորնե-
րի ու սալզաթների մեջ. թագուն մարդիկ յե-
կան, թե հեղափոխություն ա, իրավունքը ժո-
ղովրդի ձեռքին պտի ըլի, թե ել թափադ չպտի
ըլի, կոտորեցեք նրանց, խլեցեք նրանց հողերը,
բաժանեցեք ձեր մեջ ու դուք վարեցեք։ Յես
են վախտը 25 տարեկան ի. մի քանի տղա վեր
կալա, առաջ ընկա դեպի Վասիլ աղի տունը։
Բայց Վասիլ աղան շան պես իմացել եր ու
վախել քաղաք, ձեռներս չընկավ։ Որերը վոր
տաքացան գութաները լծեցինք ու մտանք, ա-
մենքս մի կողմովը, նրա հողերը, վարեցինք
(ես հողերն են ե, Սումբաթ ջան, վոր հիմի բա-
ժանել են մեզ վրա)։ Բայց թե արանքովը շատ
ժամանակ չանցավ, քաղքիցը զազախ բան բե-
րել տվավ մեր գեղի վրա զեկուցիա, մեզ մի
քանի հոգուս ել բռնոտել տվավ, բերթն ածեց,
մեր վարած հողերն ել ինքը սերմեց։ Են ժա-
մանակը նրա ժամանակն եր. համ անում եր,
համ՝ պարձենում. ամմա վոր մեր ժամանակը
յեկավ՝ յես իմ ուզածիս հասա։ Ուրա հիմա
Վասիլ աղան, իրա աղա լակոտներովը։ Բոնո-
տեցին ապրած պոպոզ վափախավորները, տա-
րան բոլորին, մոխիրները քամուն տվին, վոր
անջաղ մեր խալխին հանգատություն յեկավ։
Են ինչ, քու ժամանակդ ա, տեսնում ես, ինձ
ել են շկոլ տանում, քառասունընդ տարեկան

մարդուն գիր սովորացնում. իմացար բալա
ջան... Դե կարգա, ժամանակը ձերն ա:

Բուխարու կրակը վեր եր նստել, շեղջ դա-
ռել: Հիմա Աղալոն ավելի յեր կռանում, մոտե-
նում կրակին, վոր լավ տեսնի: Սումբաթը ան-
պիրը համարյա գիտեր, զիրքը փակած փորձում
եր մեկ-մեկ բանալով. իսկ նաթելը, վոր չեր
լսում նրանց զրույցը, ամեն անգամ իր ննջից
վեր թռչելիս՝ դիմում եր նրանց միշտ նույն
խոսքերով.

— Վեր կացեք, տնաշեն, տեղը մտեք, հրես
աքլարը կկանչի...

Յերբ կրակի լույսի տակ ել կարդալը ան-
կարելի յեր՝ հեր ու տղա վեր կացան, տեղը
մտան, դասները սերտած:

Խրճիթում զարթուն մարդ չկար, վոր ա-
կանջ դներ, թե ինչպես լուսիթյան մեջ նաթե-
լի միապաղաղ խռմփոցի հետ լսվում եր ընդ-
հատ-ընդհատ մերթ Աղալոյի թավ ձայնո՞...ու,
ու... լուս... ուսում... մերթ Սումբաթինը՝ ա-
վելի պարզ, ավելի հնչյուն՝

«...Կքանդանք մենք հինը, վոր շինենք
Նոր աշխարհ միասին...»

«. աշխարհին կտի մենք,
Քաղաքում՝ բանվորը, գյուղում՝

Նրանք անու շահում մասնաւունք
ՀՕՏ. ԲԻՈՒՆԵԱՆՑ
ՀԱՅՈՒ ՀԱՅ ՀԱՅ



11229

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԸՆԻ ՀԵՏԵՎԸՆԸ
ՄԸՆԿԱԿԱՆ ԳՐՔՈՒՅՑՆԵՐԸ

1. Բաղալը 25 կոպ.
2. Խրճիթում 15 կոպ.

Վաճառվում են հայ գրավաճառական
Գումարով գնողներին զեղչ
Հեղինակի հասցեն. Տիֆլիս, улица 3
д. № 10.

891.995

Վ-66